

այլ զգառնալ նորա ի չար ճանապարհէն եւ զկեանքն :  
 Արդ այսու զՂջմամբ գիտացեալ զփորձութիւնդ եկեալ վասն քո սխալանացդ ծանիցիս, յայնժամ եւ զեւն փորձութեանդ գտանիցես : Վասն որոյ մի՛ հոգար եւ մի՛ ցաւիր զբազանօք հեծեծեալ ընկենուլ զքեզ ի ծուլութիւն եւ յախտ յուսահատութեան, քանզի դու որպէս ոչ գիտէիր զգալիք փորձութիւնդ եւ յանկարծակի անկար յորոգայթ որսողին, քանզի ասէ Սողոմոն թէ՛ Են ճանապարհք որ թուին յաչս մարդկան թէ բարի են, բայց կատարածն նորա հայր յատակս դժոխոց : Իսկ թէ անգիտութեամբ անկար՝ գիտողն գաղտնեաց զքեզ խելամուտ արասցէ առ ի համբերել փորձանացդ որպէս զոսկի ի հուր, զի պայծառ գտեալ ի գիպող ժամու զճաշակ բժշկութեան տեսանել մարթասցիս : Եւ որպէս թէ գիտացեալ էիր՝ զգուշանայիր զգաստութեամբ, եւ վասն անգիտութեան անպատրաստ գտեալ՝ աղօթս առ Տէր, զի սպեղանիս առնել փութասցի եւ նա, որպէս ախտացելոյն հասցէ բժիշկն ամենախնամ : Զի թէ յապաշխարութիւն համարեսցիս զպատահեալ փորձութիւնդ, Մերձ է Տէր առ այնոսիկ որ մաշեալ են սրտիւք եւ առ այնոսիկ որ կարգան եւ յուսան յողորմութիւն նորա : Զի թէ հաւատաս զնախնիսն որ ի բերանոյ առիւծոց, ի սրոյ եւ ի հրոյ զերծոյց՝ նոյն Աստուած է, եւ դու եւս մարդ ես ստեղծուած ձեռին նորա : Զի թէ դու կարողացցիս հաշտեցուցանել զԱրարիչն քո զոր դու զայրացուցեր սխալանօք քովք, զոր ես ոչ գիտեմ, նա գիտէ, եւ դու վասն որոյ Մեղա՛յ տալ պարտիս Բարձրելոյն եւ ընկեա՛ զհոգս քո ի նա, եւ նա բազմազուլ է առ ի փրկել զզՂջացեալսն, որպէս զմանուկ սարտուցեալդ ի գրկաց մօրն եւ դարձ քո դարձեալ առ նոյն, որպէս Նինուէացոցն եւ բազմաց որք ի վերոյ գրեցան եւ որք եւս կան, զորս դու գիտես՝ զանբաւ զթութիւն նորա